

ՀՀ ԳԱԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼՈՐՅԱՆ ԼԻԼԻԹ ԴԵՐԵՆԻԿԻ

**ԷՂԳԱՐ ԱԼԼԱՆ ՊՈՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ
ՇԱՐԼ ԲՈՂԷՐԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ**

**Ժ. 01.07-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Հայ- ռուսական սլավոնական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՏԻՆՅԱՆ ԿԱՐԼԵՆ ՌԱՖԱՅԵԼԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԵՖԵՐՅԱՆ ՍՈՆԱ ՄԱՐԳՍԻ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԵԴՐԱԿՅԱՆ ԱՆՈՒՇ ՌՈՍՏՈՄԻ

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվա հասարակագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է **2016 թ. մայիսի 27-ին՝ ժամը 14.00-ին**, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող՝ ԲՈՀ -ի հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ ք.Երևան , Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. ապրիլի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու

Ա. Մարգարյան ՄԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

19-րդ դարի ամերիկյան գրականության ամենավառ և հակասական դեմքերից մեկի՝ Էդգար Ալան Պոյի անձը և ստեղծագործությունը միշտ գրավել են գրականագետներին, արվեստի ու գրականության տեսաբաններին: Այդ հետաքրքրությունը չի կորցրել իր արդիականությունը նաև մեր օրերում, ինչի մասին վկայում են բազմաթիվ նոր ուսումնասիրությունները՝ կապված Պոյի առեղծվածի հետ:

Պոն միաժամանակ և պոետ էր, և՛ արձակագիր, և՛ գրականության տեսաբան, որին արևմտյան գրականագիտությունը համարում է արվեստում ներըմբռնողական ինտուիտիվ ուղղության ակնավոր ներկայացուցիչներից մեկը: Բնածին խելքով օժտված, ինչպես հումանիտար, այնպես էլ ճշգրիտ գիտություններում խորը գիտելիքների տիրապետող, վերլուծական արտասովոր ունակությունների տեր անհատականություն էր Պոն, ով ամբողջ կյանքում երազում էր տրվել իր միակ կրքին՝ պոեզիային: Իր հերթին Պո-տեսաբանը, յուրովի ըմբռնելով բնությունն ու պոեզիայի առանձնահատուկ օրինաչափությունները, ստեղծեց տրամաբանորեն կուռ և յուրովի կատարյալ գեղագիտական տեսություն:

Պոյին համարում են ռոմանտիզմի գրական ուղղության հետևորդ, սակայն անհրաժեշտ է նշել, որ նա ամերիկյան ռոմանտիզմի երկրորդ սերնդի ներկայացուցիչներից էր, ում հատուկ էր ողբերգական աշխարհընկալումը, իշխող ուժի առջև անպաշտպանության գիտակցումը: Պոյի ստեղծագործության այնպիսի ինքնատիպ գծերը, ինչպիսիք են մտայլ հուսալքության հասնող խորը մեկնախոյզված, հետաքրքրությունն այն ամենի հանդեպ, ինչը իրացիոնալ է և պարուրված է գաղտնիքներով, հիվանդագին ինքնավերլուծությունը ոչ միայն ռոմանտիկական պոեզիայի պարտադիր ատրիբուտներ էին, այլև բուրժուական հեղձուցիչ հասարակությունից ահամանազատվելու պոետի ձգտումը:

Պոյի բազմակողմանի տաղանդը և նրա պոետական հանճարը չէին պարփակվում դարի շրջանակներում: Միայն շատ տարիներ անց բացահայտվեց նրա ստեղծագործության նշանակությունը, որ համահունչ էր նոր ժամանակներին:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման արդիական է, քանի որ միչև օրս էլ Պոյի կյանքն ու ստեղծագործությունը ուսումնասիրվում են: Պոյի ստեղծագործությունը հատկապես ֆրանսիական մշակույթի համար դարձավ ժամանակակից հայեցողությունների մեծ մասի բանաձևը: Արդյունքում, ի դեմս Պոյի, ծնվեց առասպել, միֆ, պաշտամունքային կերպար:

Պոն Վ.Իրվինգի և Ն.Հոթորմի հետ մեկտեղ համարվում է ազգային նովելի ժանրը ստեղծողներից, ով տեսականորեն իմաստավորել է ժանրի նշանակությունը, սկզբունքները, միասնականությունը, ճշմարտացիությունը, կարճ և ազդեցիկ ոճը: Եթե գումարենք այն փաստը, որ Էդգար Պոն երեք ժանրերի (դեդեկտիվ, գիտաֆանտաստիկ և սարսափի գրականության) հիմնադիրն է, ապա պարզ

կղառնա բոլոր ժամանակներում հսկայական հետաքրքրությունը նրա անձի և ստեղծագործության հանդեպ:

Մեր ուսումնասիրության արդիականությունը բացատրվում է նրանով, որ գրականության ու մշակույթի զարգացման ներկա փուլում Պոյի կերպարը ձեռք է բերել բացառիկ կարևորություն և արդիականություն ինչպես Ինտելեկտուալ արվեստի, այնպես էլ զանգվածային մշակույթի ոլորտում: Եվ այդ ամենի ակունքները պետք է փնտրել առաջին հերթին Էդգար Պոյի անձի ու ստեղծագործության ֆրանսիացի սիմվոլիստ Շարլ Բոդլերի ընկալման մեջ:

Միջմշակութային կապերի հետազոտումը այսօր ամենամեծ տարածում ունեցող ուղղություններից է ժամանակակից գիտության մեջ: Նման ուսումնասիրության կարևորությունը բացատրվում է նրանով, որ այստեղ համադրվում են գրականագիտական մոտեցումը և թարգմանությունների ռճաբանական վերլուծությունը, ինչը նոր նախադրյալներ է ստեղծում գրական ստեղծագործությունների հետազոտման համար:

Ատենախոսությունը ունի գործնական նշանակություն. այն կարող է կիրառվել ամերիկյան ժամանակակից գրականությանը նվիրված դասախոսություններում, Էդգար Պոյի ստեղծագործության և ֆրանսիական գրականության, գրաքննադատության ու մշակույթի հետ նրա ազդեցության և առնչության խնդիրներին նվիրված հատուկ դասընթացներում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Էդգար Պոյի ստեղծագործությունների բողլերյան թարգմանություններն են, Պոյի գեղարվեստական աշխարհընկալման բողլերյան մեկնությունները, ինչպես նաև Էդգար Պո-գրողի և Պո-անհատականության ազդեցությունը ֆրանսիական սիմվոլիստների և հիմնականում ֆրանսիական գրականության ու մշակույթի վրա:

Աշխատանքի նպատակն է համալիր կերպով ուսումնասիրել Էդգար Պոյի ստեղծագործության Շարլ Բոդլերի մեկնաբանությունը և դրա ֆրանսերեն թարգմանությունը, քանի որ Բոդլերի տեսական նյութերի զգալի մասը կապված է թարգմանությունների հետ, որոնք հնարավորություն են տալիս նրան յուրովի մեկնաբանել Պոյի ստեղծագործությունների գաղափարական և ռճական առանձնահատկությունները: Ելնելով այս նպատակից՝ մեր առջև դնում ենք հետևյալ խնդիրները.

- Քննել Պո-բանաստեղծի և Պո-անհատականության ընդհանուր բնութագիրը Բոդլերի տեսական գործերում:

- Վերլուծել Պոյի ստեղծագործությունների գաղափարական, կառուցվածքային, լեզվառճական առանձնահատկությունները Բոդլերի մեկնաբանությամբ:

- Ի հայտ բերել այն ընդհանրությունները և տարբերությունները, որոնք առկա են Բոդլերի և ֆրանսիացի սիմվոլիստների՝ Պոյի արձակ և չափածո ստեղծագործություններին վերաբերող մեկնաբանություններում և թարգմանություններում:

- Քննել այն ազդեցությունը, որ ունեցել է Պոլի ստեղծագործությունը Բողլերի, ֆրանսիացի սիմվոլիստների և այդ դարաշրջանի ֆրանսիական գրականության վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Մեր ուսումնասիրության նորույթը պայմանավորված է Էդգար Պոլի ստեղծագործության՝ Շարլ Բողլերի և ֆրանսիացի սիմվոլիստ գրողների կողմից ընկալման և արժևորման համակողմ խնդիրների ամբողջական հետազոտությունով:

Այս խնդիրները տարբեր ժամանակներում ուսումնասիրել են Պ.Քվինը, Լ. Վինը, Ռ.Ֆորթլացը, Ժ.Լականը և մի շարք այլ գրականագետներ: Այդ ուսումնասիրությունների մեծ մասը վերաբերում է կա՛մ ընդհանուր ֆրանսիական գրականության ու մշակույթի վրա Էդգար Պոլի ազդեցությանը, կա՛մ ներկայացնում է Պոլի ստեղծագործության առանձին ժանրի կամ որևէ խնդրի քննությունը՝ կոնկրետ գծագրված սահմաններում:

Ռուսալեզու հետազոտողների /Ս.Նիկոլյուկին, Գ.Զլոբին, Ա.Զվերև/ հիմնական խնդիրն է եղել ներկայացնել Էդգար Պոլի՝ որպես ռոմանտիկական գրողի ստեղծագործական առանձնահատկությունները:

Հայ իրականության մեջ Էդգար Պոլի ստեղծագործությանը անդրադարձել են Խաչիկ Դաշտենցը, Աշոտ Գաբրիելյանը, Արփիկ Լազարյանը, Ժաննա Կարապետյանը, Մեղա Գաբրիելյանը: Մեր աշխատանքի նորույթն այն է, որ առաջին անգամ մեր գրականագիտության մեջ փորձ է արվում ուսումնասիրել Էդգար Պոլի ստեղծագործության և գեղագիտական հայեցակարգի քննադատական վերաիմաստավորումը Շարլ Բողլերի տեսական գործերում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Մեր աշխատանքի տեսական հիմքն են կազմում ժամանակակից գրականագետների հետազոտությունները կապված միֆապոետիկայի, միֆական մտածողության և ժամանակակից գրականության մեջ դրանց դերի հետ՝ Յու. Լոտման, Ե. Մելետինսկի, Ու. Էկո, Ռ.Յակոպսոն, Ի.Լեվի:

Կիրառել ենք ուսումնասիրության մեթոդաբանական տարբեր սկզբունքներ՝ համադրման, զուգադրման և համեմատական վերլուծության: Հետազոտման ընթացքում հաշվի են առնվել ֆրանսիական, ամերիկյան, ռուսական, ինչպես նաև հայ գրականագիտության արդի մոտեցումները և առնչությունները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հողվածներում, որոնք ընդգրկվել են Հայաստանի Հանրապետությունում տպագրվող գիտական հանդեսներում և ժողովածուներում:

Ուսումնասիրությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի ռումանագերմանական ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնում ու երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացված է ատենախոսության ուսումնասիրության առարկան, հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, շարադրված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, ընդգծված է գիտական նորությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Էդգար Պոն ֆրանսերեն թարգմանություններում և նրա ազդեցությունը ֆրանսիական գրականության վրա

Ատենախոսության առաջին գլխում դիտարկում ենք Էդգար Պոյի ստեղծագործության արտացոլումն ու հեղինակի կերպարի միֆականացումը ֆրանսիական գրականության և մշակույթի մեջ: Փորձել ենք մեկ ընդհանուր պատկերի մեջ ներառել ոչ միայն այդ կերպարի ստեղծման ամենավառ և գլխավոր մասը՝ Շարլ Բոդլերի քննադատական աշխատանքների և թարգմանությունների փուլը, այլև գրեթե չշոշափված՝ Բոդլերին նախորդած և հաջորդած ֆրանսիացի այլ թարգմանիչների և մեկնաբանների գործերը: Շարլ Բոդլերի կողմից ստեղծված Էդգար Պոյի կերպարը ֆրանսիական գրականության և մշակույթի մեջ հիմք հանդիսացավ ամերիկացի գրողի անձի միֆականացման համար: Այն նմուշ-օրինակ ծառայեց Ֆրանսիայի հաջորդ սերունդների քննադատների և գրողների համար, որոնք կարող էին ինչպես համաձայնել, այնպես էլ հերքել Բոդլերի մոտեցումը: Մակայն նրանք էլ իրենց հերթին, այսպես թե այնպես, նպաստում էին այդ կերպարի հետագա զարգացմանը՝ հարստացնելով այն բազմապիսի ու բազմազան իմաստներով, խորհրդանիշ ու միջ դարձնելով «ֆրանսիական Պոյի» կերպարը:

Էդգար Պոյի կերպարը՝ որպես պոետի միֆականացված կերպար, ստեղծվում է այն շրջանում, երբ ռումանտիզմը դեռ չէր կորցրել իր ազդեցությունը լայն հանրության վրա: Իսկ այդ միֆականացման երկրորդ փուլը տեղի ունեցավ սիմվոլիզմի ծաղկման շրջանում:

Մի առանձին էջ բացվեց ֆրանսիացի ընթերցողների համար՝ կապված Էդգար Պոյի ստեղծագործության հետ, երբ 1872 թվականին Ստեֆան Մալարմեն «Արվեստի և գրականության վերածնունդը» ամսագրում հրատարակեց Պոյի

բանաստեղծությունների թարգմանությունները, որոնք Բոդլերը ժամանակին համարում էր անթարգմանելի: Այս հարցում որոշակիություն մտցնելու համար հարկ է հակիրճ անդրադառնալ Պոյի բանաստեղծական սկզբունքներին և դրանց ձևավորման գործընթացին :

Բոդլերը կարողանում է համոզիչ կերպով ցույց տալ, որ Պոյի բանաստեղծական տեսության անկյունաքարը «էֆեկտն» է՝ տպավորությունը: Տպավորության, դրանով իսկ հոգու վեհացման հասնելը հնարավոր է, եթե երկն ունի պյուժեի, պատկերային համակարգի, տոնայնության միասնություն: Այս ամենն անհրաժեշտ է, որպեսզի ձեռք բերվի հուզական ազդեցության առավել խտացվածություն կամ Պոյի ձևակերպմամբ՝ տպավորության միասնություն: Սա Պոյի գեղագիտության կարևորագույն հասկացություններից մեկն է:

Մեր վերլուծության մեջ կոնկրետ օրինակների վրա ցույց ենք տալիս, որ Պոյի պոեզիայի անմիջական նպատակը բավականությունն է, ոչ թե կենսական ճշմարտությունը: Այդ բավականությունը կրում է անորոշ բնույթ՝ ի տարբերություն արձակից ստացված բավականության, որը միանգամայն որոշակի բնույթ ունի: Բավականության «որոշակիության» և «անորոշության» հակաթեզը Պոյի պատկերացումներում կապված է երաժշտության և պոեզիայի արյունակցության մասին դրույթի հետ: Սակայն պոեզիայի «անորոշության» հասկացությունը Պոյի գեղագիտության մեջ ուներ շատ ավելի կարևոր նշանակություն, քան այս վաղուց հայտնի համադրումը:

Պոյի պոեզիայում ներշնչման ձևերը ինքնանպատակ չեն: Նրանք առաջացնում են երկի գեղարվեստական կառուցվածքի յուրատեսակ համակարգ: Բանաստեղծն այն անվանել է «միստիկական իմաստ»: Ռոմանտիկական տերմիններից ժամանակակից բանաստեղծական լեզվի անցնելով՝ կարելի է ասել, որ Պոյի պոեզիայի «միստիկական իմաստը» ոչ այլ ինչ է, քան տրամաբանական և հուզական ենթատեքստ: Բանաստեղծը տպավորության (էֆեկտի) հասնելու հարցում դրան հսկայական նշանակություն է տալիս. «Այն ունի երաժշտական նվագակցության անսահման ուժը: Նվագակցությունը կենդանացնում է մեներգը, միստիկականը, այսինքն՝ ենթատեքստը, ոգեշնչում հրաշալի մտահղացումը և բարձրացնում այն մինչև իդեալականը»- գրում է Է.Պոն:¹

Այս նույն գլխում անդրադառնում ենք Ստեֆան Մալարմեի թարգմանություններին և քննադատական գործերին՝ կապված Պոյի գրական ֆենոմենի հետ: Մալարմեն սկիզբ դրեց Պոյի տեքստերի նրբագեղ ընկալմանը՝ Նախորդ թարգմանիչները՝ մասնավորապես Բոդլերը, ձգտում էին նրա արձակ գործերում պահպանել Պոյի խոր ու հմայիչ խոսքի սահուն հոսքը, ստեղծագործությունների տառն ու ոգին, իսկ Մալարմեն Պոյի բանաստեղծությունները թարգմանելիս չէր ձգտում խստորեն պահպանել դրանց ձևը և թարգմանում էր ալեքսանդրյան բանատողով, որպեսզի ֆրանսիացի ընթերցողը հիմնական շեշտը դնի դրանց իմաստի ընկալման վրա: Ստեֆան Մալարմեից հետո որակապես նոր մոտեցում է ստեղծվում Էդգար Պոյի

¹ Quinn A.H. Edgar Allan Poe. A critical biography. N.Y., 1969, p.91

բանաստեղծական տեքստերի՝ որպես խոր ու բարդ, բազմաշերտ գործերի հանդեպ, որտեղ հիմնական խորությունը և բուն իմաստը թաքնված է ենթատեքստում:

Ստեֆան Մալարմեի թարգմանությունները մի առանձին փուլ են Պոյի կերպարի ընկալման համար: Եթե Բողլերը ստիպեց ամբողջ Ֆրանսիային ճանաչել Պոյի արձակը, ապա Մալարմեն բացահայտեց Ֆրանսիայի համար նրա պոեզիան: Ի տարբերություն Բողլերի, Մալարմեն իր թարգմանություններով նպատակ չէր հետապնդում ձեռք բերել լայն հասարակության ճանաչումը և արձագանքը. նրան ավելի շատ հետաքրքրում էր աշակերտների և որոշակի գեղագիտական հայացքների կողմնակիցների նեղ շրջանակը: Եվ օրինաչափ է, որ Պո-բանաստեղծի ճանաչումը ֆրանսիացի ընթերցասեր լայն հասարակության մոտ եկավ ավելի ուշ, քան Պո-արձակագրի հաջողությունը:

Ինչպես Բողլերը, այնպես էլ Մալարմեն յուրովի փորձում էին բարդեցնել Պոյին այն ժամանակ, երբ նրանց նախորդած թարգմանիչները և մեկնաբանները, հակառակը, պարզեցնում էին նրան: Բողլերը իր թարգմանություններով ավելացնում և ուժգնացնում էր տեքստերի առեղծվածային, միստիկական հնչեղությունը, իսկ քննադատական հողվածներում նա Պոյի կերպարը բարձրացնում էր մարտիրոսի «պատվանդանին» դրանով իսկ թույլ չտալով «թեթև» վերաբերվել նրա ստեղծագործությանը:

Անգամ 20-րդ դարավերջի ֆրանսիացի գրողները, անդրադառնալով Պոյին և խոսելով նրա ազդեցության մասին, առաջին հերթին հենվում են բողլերյան մոտեցումների վրա: Գրականագիտության մեջ անգամ ձևավորվել է «ֆրանսիական Պո» արտահայտությունը:

Եթե սկզբնական շրջանում Պոյի ստեղծագործությունները «հարմարեցվում էին» ֆրանսիական մենտալիտետին և ֆրանսիական իրույթներին, ապա Բողլերից հետո այդ մոտեցումը պետք է արմատապես փոխվի. միայն Բողլերին կհաջողվի պահպանել Պոյի ստեղծագործության տառի և ոգու միասնությունը, ամբողջականությունը և նրա խոսքի հմայքը: Եթե սկզբնական շրջանում՝ մինչ Բողլերը, ինչպես տեսանք Պոն գլխավորապես ներկայացվում էր որպես «հետաքրքրաշարժ» և «տարօրինակ ու առեղծվածային» հեղինակ, ապա Բողլերը կբարձրացնի Պոյին այն պատվանդանի վրա, որին, հիրավի, արժանի է այդ հանճարեղ գրողը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Շարլ Բողլերը՝ Էդգար Պոյի թարգմանիչ

Պոյի՝ ֆրասերենով առաջին թարգմանությունների շրջանը 1845-1857 թվականներն են, երբ ստեղծվում են նաև առաջին քննադատական գործերը նրա մասին: Այդ շրջանին է վերագրվում հեղինակի գրական և տեսական գործերի տարածումը, մասսայականացումը:

Գրականության անվանի տեսաբան Լ.Լեմոնյեն իր ուսումնասիրության մեջ նշում է, որ «ֆրանսիական Պոյի» ստեղծման պատմությունը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է սկսել թարգմանություններից: Թարգմանությունները իր հերթին Լեմոնյեն պայմանականորեն բաժանում է երկու շրջանի՝ պատմվածքների

թարգմանություն և պոեզիայի թարգմանություն: Եթե առաջինում գերիշխում է Բողոքը, ապա երկրորդում՝ Մալարմեն: Մակայն այստեղ պետք է մի վերապահում անել. այս գործում կարևոր նշանակություն են ունեցել նաև այն թարգմանությունները, որոնք կատարվել են Բողոքից և Մալարմեից առաջ և այժի են ընկնում մակերեսային ընկալումով: Այդ թարգմանությունները նաև թույլ են տալիս իմաստային տրանսֆորմացիա՝ փոխակերպում: Դրան համապատասխան՝ մակերեսային էր և ոչ այդքան հասուն նաև քննադատությունը:

Ֆրանսերենով առաջին թարգմանությունը ստեղծվել է դեռ Պոլի կյանքի օրոք. 1845 թվականի նոյեմբերին Ամեդ Պիշոն թարգմանեց Պոլի «Ոսկե բզեզը»: Իսկ հաջորդ տարի լույս է տեսնում «Սպանություն Սորգ փողոցում» ստեղծագործության ֆրանսերեն ազատ վերապատմումը, որը կրում էր «Արդարադատության քրոնիկներում աննախադեպ սպանությունը» վերնագիրը: Մի կողմից կարելի էր անտեսել այս թարգմանությունները նրանց անկատար լինելու պատճառով, սակայն դա կլիներ բացթողում, քանի որ մինչբողոքյան այդ թարգմանությունները Պոլի ստեղծագործությունների ոչ միայն առաջին թարգմանության, այլև առաջին «վերամշակման» փորձն են, և դրանք ուղղակի թե անուղղակի կերպով ազդել են նաև Բողոքի վրա: «Սպանություն Սորգ փողոցում» ստեղծագործության թարգմանության սկզբնամասի հետևյալ տողերը արդեն վկայում են այդ թարգմանության «ազատ ոճի» մասին.

This morning, about three o'clock, the inhabitants of the Quartier Saint-Roch were aroused from the fourth sleep by a succession of terrific shrieks issuing apparently from the fourth story of a house in the Rue Morgue, known to be in the sole occupancy of one Madame L'Espanaye and her daughter, Mademoiselle L'Espanaye.

«Այս առավոտ՝ ժամը երեքին մոտ, Մեն Ռոկ թաղամասի բնակիչները քնից արթնացան Սորգ փողոցի չորրորդ հարկից եկող սարսափելի ճիչերից, որոնք լսվում էին մի բնակարանից, որի միակ բնակիչներն էին մադամ Լ'Էսպանյեն և նրա դուստր օրիորդ Լ'Էսպանյեն»:

Dans la nuit du 9 au 10 juillet, une maison, rue de l'Ouest N°... a été le théâtre d'un inexplicable attentat. Entre minuit et une heure, on a entendu des cris violents et qui portaient du 2^e étage de cette maison; ces clameurs ont effrayé quelques ouvriers qui passaient dans la rue ; ils ont frappé, réveillé le portier qui était endormis, et tout ensemble ont monté les escaliers. Ce deuxième étage était occupé par Madame Duparc.

«Չուլիսի 9-ի լույս 10-ի գիշերը Ուեսթ փողոցի թիվ ...տունը դարձավ մի անբացատրելի հարձակման թատերաբեմ: Կեսգիշերից մինչև ժամը մեկի սահմանում լավեցին սարսափելի ճիչեր, որոնք գալիս էին տան երրորդ հարկից և որոնք վախեցրին փողոցով անցնող բանվորներին: Նրանք թակեցին շենքի դուռը, արթնացրին դռնապանին, որն արդեն քնած էր, և բոլորը միասին բարձրացան աստիճաններով: Այդ երրորդ հարկը զբաղեցնում էր մադամ Դյուպարկը »:

Թարգմանության տեքստից երևում է, որ փոփոխված են անունները, փողոցի անվանումը, հարկը, ավելացված են մի շարք մանրամասնություններ, որոնց շնորհիվ տեքստը դառնում է ավելի գունեղ ու գրավիչ՝ ի համեմատություն բնագրի «նոր արձանագրության» հետ, որը ավելի շուտ քրեական արձանագրություն է

հիշեցնում: Ակնհայտ է, որ այս մեծ տարբերությունը բացատրվում է անզլիացի և ֆրանսիացի ընթերցողների ճաշակների տարբերությամբ:

Մեկ այլ ճանաչում գտած թարգմանչի՝ Ֆորգի թարգմանություններում ակնհայտ է իմպրեսիոնիզմի հմայքը. նա պահպանում է բնագրի տառը՝ մինևույն ժամանակ ավելացնելով որոշ գծեր, հոգեբանական տարրեր, որոնք, սակայն, հաճախ ստվերում են Պոյի գաղափարը: 1846 թվականի հոկտեմբերին Ֆորգը Ֆրանսիայում հրատարակում է Պոյին նվիրված առաջին հոդվածը: Առաջին անգամ ֆրանսիացի ընթերցողը ծանոթանում է ամերիկացի գրողի հետ, որին Ֆորգը անվանում է ոչ միայն «հռչակավոր գրող», այլև «քննադատության արքայագն»: Հետաքրքիր է, որ Ֆորգը տեղյակ չէ Պոյի բանաստեղծական արվեստի մասին. նա այն կարծիքին է, որ Պոն միայն արձակագիր է և քննադատ: Անհրաժեշտ է նշել, որ Ամերիկայի գրական կյանքի մասին շատ քիչ տեղեկություններ կային Ֆրանսիայում:

Ամփոփելով Բողլերից առաջ արված՝ Պոյի ստեղծագործությունների ֆրանսերեն թարգմանությունները, կարելի է փաստել, որ Բողլերից առաջ թարգմանիչներից և ոչ մեկը չկարողացավ ըստ արժանվույն ներկայացնել Պոյի ստեղծագործությունը: Ֆորգը թեև առաջինն էր, ով ներկայացրեց Էդգար Պոյին ֆրանսիացի ընթերցողին, սակայն նա գեղեցկացնում էր տեքստը: Իզաբել Մենյեն հայտնի դարձրեց Պոյին ավելի լայն շրջաններին, սակայն նա իր հերթին կրճատում և ձևափոխում էր տեքստը: Բորգերը հրատարակեց Պոյի ստեղծագործությունների ժողովածուն առանձին գրքով, բայց նրա ձգտումն էր առաջին հերթին լինել հստակ և նրբագեղ: Լեոն դը Դելլին իր թարգմանությունների մեջ հաճախ էր թույլ տալիս անճշտություններ կամ հեռանում բնագրից: Եվ վերջապես Գյուզը իր թարգմանությունները ձգտում էր ճշգրիտ կատարել, սակայն նրան հաջողվեց ավարտել Բողլերի աշխատանքը՝ թարգմանելով և լրացնելով Պոյի այն գործերը, որոնք չէր հասցրել անել Բողլերը:

Առաջին անգամ Բողլերն անդրադարձավ Էդգար Պոյի ստեղծագործությանը 1850-ականների սկզբին: Արդեն 1854 թվականին նա գրական ամսագրերից մեկին է հանձնում Էդգար Պոյի երեսունհինգ պատմվածքներ և նովելներ: 1856 թվականին Բողլերը կազմում է Պոյի իր առաջին ժողովածուն՝ «Արտասովոր պատմությունները», իսկ 1857 թվականին՝ երկրորդ ժողովածուն՝ «Նոր արտասովոր Պատմություններ»: 1858 թվականին լույս է տեսնում նաև մեկ ժողովածու, որը Բողլերը վերնագրում է «Արթուր Գորդոն Փիմի Արկածները»:

Բողլերը, որպես «դարի վերջին զավակներից մեկը», իր ստեղծագործությամբ նշանավորեց լուսավորական, ռոմանտիկական գրականության ու գեղագիտության վերջնակետը և գեղարվեստական նոր միտումների առաջացումը: Նրա խոսքը թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ հնչեց նորովի, բացեց մի նոր աշխարհ, որը եվրոպական բանաստեղծության մեջ կատարեց իսկական հեղափոխություն իր առաջ քաշած նշանաբանով՝ մոդեռնիստ /*moderne*/: Ըստ այդմ, նա կանգնեց այն խաչմերուկում, որից սկիզբ են առնում նոր շրջանի գրեթե բոլոր գրական ուղղությունները:

Պատկերացումն Էդգար Պոյի մասին որպես անհատ և ստեղծագործող անձ, որն ամբողջացնում է բողլերյան հոդվածները կարդալու ժամանակ, անկասկած, բխում

է Գրիգվոլդից: Բողլերը համաձայնեց Գրիգվոլդի հետ միայն փաստերի առումով, սակայն դրանք քացահայտեց նորովի և դրանց տվեց սեփական գնահատականը :

Այսպիսով, Պոյի ստեղծագործությունների թարգմանության հետ մեկտեղ Բողլերը ուսումնասիրում է ամերիկացի գրողի գեղարվեստական աշխարհը, գեղագիտական սկզբունքները և պոետիկայի առանձնահատկությունները:

Բողլերի մոտ՝ որպես թարգմանչի, առաջանում է խնդիր նույնական թարգմանության և բնագրի ճիշտ իմաստի վերարտադրման միջև: Բողլերը քաջ գիտակցում է, որ թեև նույնական թարգմանությունը շատ կարևոր է, սակայն, մինևույն ժամանակ, նա նաև հասկանում է, որ յուրաքանչյուր թարգմանություն առաջին հերթին ենթադրում է թարգմանվող տեքստի գաղափարական բովանդակության ճշգրիտ վերարտադրություն: Իսկ տվյալ դեպքում խնդիրը ոչ միայն բնագրի ճիշտ թարգմանության, այլև դրա՝ մշակութային մի հարթությունից մյուսը տեղափոխման մեջ է:

Թեև Բողլերն իր թարգմանությունների մեջ, որպես կանոն, պահպանել է առանցքային բոլոր մոտիվները, այդուհանդերձ, բանալի-բառերի գործածումը նրա մոտ երբեմն փոփոխվում է՝ կապված իր առջև դրված խնդիրների հետ: Մենք համոզվում ենք, որ Բողլերը բավականին լավ է տիրապետում անգլերենին՝ ճշգրիտ համարժեքները գտնելու համար, բայց դրա հետ մեկտեղ՝ ուսումնասիրելով Բողլերի գեղարվեստական-գեղագիտական համակարգը, ինչպես նաև նրա թարգմանչական սկզբունքները, գալիս ենք այն եզրահանգման, որ իր բոլոր թարգմանություններում Բողլերը հենվում է սեփական աշխարհընկալման և սեփական գեղագիտական արժեհամակարգի վրա:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Էդգար Պոն Բողլերի և ֆրանսիական գրական քննադատության մեջ

Էդգար Պոյի ստեղծագործությունների թարգմանության հետ մեկտեղ Բողլերը՝ որպես բանաստեղծ և որպես քննադատ, տեսականորեն ուսումնասիրում է Պոյի գեղարվեստական աշխարհը, գեղագիտական սկզբունքները և պոետիկայի առանձնահատկությունները: Իր՝ ամերիկացի գրողին նվիրված տեսական և քննադատական գործերում Բողլերը հետազոտում է ամեն ինչ՝ կապված Պոյի կյանքի ու ստեղծագործության հետ:

Սնդրադառնալով Գ.Վիլիսի քննադատությանը՝ Բողլերը, ով խոր հարգանք ուներ այդ գրողի ու քննադատի հանդեպ, հստակ պարզաբանում չի տալիս նրա հոդվածի վերաբերյալ, որտեղ Գ.Վիլիսը նշում է, որ Էդգար Պոն գրում էր հոգնեցուցիչ դժվարությամբ և այնպիսի բանատողերով, որոնք չափազանց գերազանցում էին սովորական ընկալման մակարդակը:² Մամեն դեպքում, ի մի բերելով Բողլերի կողմից արված նուրբ ակնարկները՝ նկատում ենք, որ նա չի

² Baudelaire, Ch. : Edgar Allan Poe : sa vie et ses ouvrages — Paris, L'Herne, collection Confidences, 1994 — P. 15

ժխտում Պոլի բանատողերի «ղժվարությունն» ու «ծանրությունը», բայց այդ լարվածությունը Բողիերի համար հոգնեցուցիչ չէ, այլ հակառակը կլանող, գերող:

Ինչ վերաբերում է «սովորական ընկալման մակարդակը» գերազանցող բանատողերին, կարող ենք արտահայտել այն կարծիքը, որ Պոն, այնուամենայնիվ, ինտելեկտուալ գրող է, և էթե նրա նովելներն ու պատմվածքները հիմնականում ընկալելի են ընթերցողների լայն զանգվածներին, ապա նույնը չի կարող լինել պոեզիայի դեպքում:

Բողիերը նշում է, որ Պոն որպես գրող կարող է դիտարկվել երեք կողմից՝ որպես քննադատ, որպես պոետ և որպես վիպասան: Վերջին կարգավիճակում նա դրսևորվում է նաև որպես փրիլսոփա:³

Ըստ Բողիերի՝ Պոլին ամենից առավել խանգարեց քննադատի փառքը: Նա իր դեմ հանեց բազմաթիվ թշնամիներ, որոնք ծարավ էին վրեժխնդրության: Եվ հետագայում, երբ նրա ստեղծագործությունները սկսեցին հայտնվել ասպարեզում, նա դաժանաբար վարձահատույց եղավ իր դառը ճշմարտության համար: Գրական աշխարհում չկա մի այնպիսի նախատինք կամ հայեցողություն, որ նրան չանեին:⁴

Խոսելով Պոլի լեզվառձական առանձնահատկությունների մասին, Բողիերը նշում է. «Էդգար Պոլի մոտ խոսքը ծայրաստիճան հղկված է և աչքի է ընկնում գովելի հակիրճությամբ: Անուշադիր ընթերցողը կամ այնպիսի մեկը, ով չի ջանում խորանալ ընթերցման առարկայի մեջ, Պոլից շատ բան չի հասկանա: Վերջինիս բոլոր մտքերը, ինչպես հմուտ ձեռքով բաց թողնված նետեր, ձգտում են դեպի մեկ նպատակ»:⁵

Արդեն քսանչորս տարեկան հասակում Շարլ Բողիերը հասարակությանը ներկայացավ որպես լուրջ քննադատ: Այդ ճանաչումը նրա մոտ հաստատվեց շատ ավելի վաղ, քան Բողիեր-թարգմանչի և Բողիեր-պոետի մոտ: Նա շատ վստահ էր կողմնորոշվում ժամանակակից քննադատության մեջ և հաճախ էր հղումներ կատարում քննադատության մեջ ընդունված հասկացություններին, բայց միշտ պահպանում էր գրելու և վերլուծելու իր անհատական ոճը:

Բողիերը, ով միշտ իր մեջ կրում էր սեփական մեղավորության զգացումը, Պոլին համարում է սուրբ: Պո-տառապյալ, Պո-նահատակ, Պո-սուրբ, Պո-ընտրյալ, միջնորդ Աստծո և մարդկանց միջև՝ ահա այսպիսին է տեսնում Պոլին Բողիերը: «Խելագար հանձար» արտահայտությունը, որն առաջին անգամ հնչեց Պոլի մասին Բողիերի արտահայտություններում, հետագայում իր արձագանքը գտավ մի շարք գրողների և քննադատների, առաջին հերթին՝ Գյուիսմանսի մոտ և հասավ մինչև 20-րդ դարը, երբ ասպարեզ եկավ Ֆրոյդի հոգեվերլուծությունը, և անգիտակցականի խնդիրը մղվեց առաջին պլան: Հոգեվերլուծության տեսանկյունից Պոլի անգիտակցականի ուսումնասիրությունը առաջիններից մեկը նախաձեռնում է Մարի Բոնապարտը, ով իր ուսումնասիրության մեջ հենվում է Բողիերի այն դիրքորոշման վրա, «որ Պոլի հերոսները նույն ինքը Պոն են»:

³ Նույն տեղում, էջ 20

⁴ Նույն տեղում, էջ 21

⁵ Նույն տեղում, էջ 29

Թեև ո՛չ ֆրանսիական և ո՛չ էլ եվրոպական ու ամերիկյան գրականագիտության մեջ ոչ ոք կասկածի տակ չի դնում այն փաստը, որ Պոյի անունը Ֆրանսիայում բոլոր առումներով առաջին հերթին կապված է Շարլ Բոդլերի հետ, սակայն սահմանափակվել միայն Բոդլերի քննադատական աշխատանքներով և մեկնաբանություններով, ըստ մեզ, սխալ կլիներ: Պոյի՝ ֆրանսիական գրականության վրա ունեցած ազդեցության մասին խոսել են Բոդլերի ժամանակակից մի շարք անվանի ֆրանսիացի գրողներ ու գրաքննադատներ, որոնք այսպես թե այնպես հենվում են բոդլերյան փորձի վրա: Եվ Բոդլերի՝ Պոյի հետ կապված քննադատական և մեկնաբանական նյութերի համադրումը մեր կարծիքով ամբողջական է դարձնում ամերիկացի գրողի ազդեցության հարցը ֆրանսիական գրականության և գրաքննադատության մեջ:

Այս գլխում վերլուծության ենք ենթարկում նաև Պոլ Վալերիի գրական-քննադատական այն անդրադարձները, որոնք կապված են Բոդլերի՝ Էդգար Պոյի ստեղծագործության արժևորման հետ: Վալերին մանրակրկիտ կերպով կանգ է առնում ինչպես Պոյի ստեղծագործությունների բոդլերյան թարգմանությունների, այնպես էլ նրա մեկնաբանությունների և տեսական դրույթների վրա: Մեծագույն հարգանք ունենալով Բոդլերի հանդեպ և նրան նոր դարաշրջանի լավագույն գրողը համարելով՝ Վալերին, այդուհանդերձ, երբեմն շատ խիստ է Բոդլերի հանդեպ իր քննադատության մեջ: Մի փոքրիկ շեղումը, անճշտությունը, նմանությունն անգամ Վալերին չի շրջանցում և հակառակը՝ դրան խիստ գնահատական է տալիս: Այսպես, նա գրում է, որ Բոդլերը երբեմն չափից ավել է տարվում և որոշ դեպքերում ակամա «յուրացնում է» Պոյին՝ բացարձակ չբաժանելով սեփական բառերը Պոյի բառերից, իսկ երբեմն էլ սեփական անձը՝ Պոյից: Վալերիի այս խոսքերը, եթե ընդունենք որպես հիմք, ապա, փաստորեն, այս դեպքում տեղի է ունենում ոչ միայն Պոյի գաղափարների, այլև վերջինիս անձի և նրա կենսագրության վերափոխում: Համենայն դեպս, Վալերին այդ մասին խոսում է որոշակի համոզվածությամբ: Նա Պոյին անվանում է «ներթափանցման Դեմոն, վերլուծության հանձար, տրամաբանության և երևակայության, միստիցիզմի և հաշվարկի, ծանրակշիռ և ամենագայթակղիչ համադրությունների գյուտարար, բացառությունների հոգեբան, գրականության ինժեներ. ահա թե ինչ տեսավ նա Էդգար Պոյի մեջ, և ինչը հիացրեց նրան: Այդքան անսովոր հեռանկարները և բացառիկ հնարավորությունները հմայեցին նրան: Նրա տաղանդը ենթարկվեց վերափոխման, նրա ճակատագիրը զարմանահարշ ձևով փոխվեց»:⁶

Պոլ Վալերին, երբ Պոյին անվանում է «ներթափանցման դեմոն», հավանաբար նկատի ունի ամերիկացի գրողի յուրօրինակ տաղանդը՝ միստիկականը, առեղծվածայինը «հավասարակշռելու», այն սովորականի, առօրեականի հետ կապելու տաղանդը: Վալերիի վերոնշյալ մեջբերման մեջ ավելի հետաքրքիր է այն, որ Պոն նաև ոգեշնչող է. նա է դարձրել Բոդլերին այնպիսին, ինչպիսին նա կա: Եթե անգամ ընդունենք, որ սա չափազանցություն է, հնարավոր չէ հերքել այն փաստը,

⁶ Валери, П. Положение Бодлера // Валери, П. Об искусстве. — М.: Искусство, 1993. — с. 98

որ Պոյի անձը, նրա հայացքները և նրա ստեղծագործությունները էական բեկում մտցրին Բողերի աշխարհընկալման և գեղարվեստական համակարգի մեջ:

Շարունակելով Բողերի ավանդույթը՝ Լեմոնյեն փորձում է վերլուծել Պոյի ազդեցությունը ֆրանսիական գրականության բոլոր ժանրերի վրա: Սակայն Լեմոնյեն անց է կացնում ոչ միայն բացահայտ զուգահեռներ, այլև «թաքնված» ևս մեկ առանձնահատկություն է աչքի ընկնում Լեմոնյեի ուսումնասիրություններում. նա այն եզակի քննադատներից է, ով դիտարկում է միայն Պոյի ստեղծագործությունը՝ չռռափելով նրա կենսագրությունը: Ուրիշ հարց է, որ այդ վերլուծության արդյունքում ձևավորվում է մի պատկեր, որը վկայում է Պոյի կերպարի և նրա ստեղծագործության միջև եղած անբաժանելի կապի մասին:

Լեմոնյեն շարունակում է Բողերի և Վալերիի այն գաղափարը, որ Պոն ուներ հստակ միտք: Եվ այդ գաղափարը առաջնորդող է դառնում Պոյին վերաբերող Լեմոնյեի ուսումնասիրությունների մեջ:

Մեկ այլ քննադատ՝ Ժ.Ռուսլոն մեծ պատկառանքով է խոսում Բողերի «կերտած» Պոյի մասին, մինչդեռ քննադատ Ժ.Կաբոն ընդվզում է այն գաղափարի դեմ, որ Բողերի և Պոյի մեջ կա մեծ նմանություն և ընդհանրություն: Կաբոն գտնում է, որ նրանք այլ տիպի և հոգևոր այլ արժեքների տեր բանաստեղծներ են: Հակադրվելով Պոյի բողերյան ընկալմանը, Կաբոն հաճախ կրկնում է, որ Բողերը սխալ է, և փորձում է կարևորել Պոյի դերը և կշիռը ամերիկյան գրականության մեջ անտեսելով մինչ այդ եղած թե՛ ֆրանսիական և թե՛ ամերիկյան քննադատների բոլոր կարծիքները:

Կաբոյի աշխատանքի հիմնական նպատակներից մեկն էր խոսել Պոյի մասին՝ որպես մեծ դեր ու կշիռ ունեցող ամերիկացի գրողի և լրագրողի, ինչը նրա կարծիքով չի արվել Բողերի ժամանակներից ի վեր: Տպավորություն է ստեղծվում, որ քննադատը իր առջև գլխավոր նպատակ էր դրել՝ բոլոր կետերով հակառակվել Բողերին: Եվ դա վերաբերում է ոչ միայն Պո-ամերիկացու կյանքի օրոք հայրենիքում ունեցած նրա հեղինակության ու հաջողության խնդիրներին, այլև Պոյի ստեղծագործական տեխնիկայի բազմաթիվ հարցերին:

Պոյին նորովի բացահայտելու փորձ է անում նաև Ռ. Ֆոլկլացը: «Էդգար Պոյի աշխարհը» աշխատանքի մեջ նա ընդգծում է ֆրանսիական քննադատների հիմնական մասի «անհիմն լինելը». «Պոյին հասկանալու համար անհրաժեշտ է ստեղծողի նրան իր իսկ համատեքստում», - գրում է Ֆոլկլացը՝ նկատի ունենալով ինչպես սոցիալական, այնպես էլ ստեղծագործական ու գաղափարական համատեքստը:⁷

Ճիշտ է, Ֆոլկլացը չի հակադրվել նախորդ հետազոտողներին, բայց այլ ռազմավարություն է ընտրում. նա պարզապես անտեսում է նախորդ բոլոր ուսումնասիրությունները: Բայց միակը, ում Ֆոլկլացը չի կարողանում շրջանցել, Բողերն է:

Ֆոլկլացը շատ զգուշորեն է մոտենում Էդգար Պոյի կենսագրական փաստերին և նրա ստեղծագործությունների մեջ դրանց արտացոլմանը: Քննադատը գիտակցում

⁷ Forclaz, R. Le monde d'Edgar Poe. Berne, Herbert Lang. — Francfort/M., Peter Lang, 1974. — p. 24

է, որ Պոյի միֆականացված կերպարը այնքան է արմատավորվել Ֆրանսիայում, որ այն գրեթե անհնարին է հերքել կամ փոխել: Սակայն ինքն իր հերթին չի բերում որևէ ծանրակշիռ փաստ, կամ չի անում մանրակրկիտ վերլուծություն, որը կարող էր հերքել նախորդ հետազոտողների կարծիքը: Թերևս միակ բանը, որ նա փորձում է հակադրել այդ թեզին, այն դրույթն է, որ Պոն որպես անհատ, եղել է սթափ գիտակցության տեր մարդ:

Ավելի ուշ Կ.Բիշարը գրում է «Էդգար Պոյի քննադատական միտքը» աշխատությունը, որտեղ հետազոտում է մի կողմից Պոյի՝ ստեղծագործության «կառուցվածքի փիլիսոփայությունը», մյուս կողմից նրա «Ագուստին» բանաստեղծությունը ձգտելով որքան կարելի է հստակ և հիմնավորված ներկայացնել իր մոտեցումը: Նա գրում է. «Ես վերջերս փորձեցի ցույց տալ, թե ինչպես է Բողերի ստեղծած կերպարը վարակել այնպիսի անկախ ուղեղ, որպիսին Անդրե Բրետոնն է»⁸: Բիշարի կարծիքով Բողերը կարողացել է Պոյի մասին իր սխալ ընկալմամբ «վարակել» ֆրանսիացի քննադատների մեծ մասին այնպես, որ Պոյի ֆրանսիական քննադատությունը, ըստ Բիշարի, իր հիմնական մասով հանդես չի գալիս քննադատություն բառի ամբողջական իմաստով, այլ ավելի շուտ զուտ սուբյեկտիվ տեսանկյունի արտահայտություն է: Մինևույն ժամանակ Բիշարը համոզված է Պոյի հանճարեղ հեղինակ լինելու մեջ, ով նրա կարծիքով ավելի շուտ մաքուր տրամաբանության կողմնակից է:⁹

Մեկ այլ մոտեցում է ցուցաբերում Պոյի բողերյան մեկնաբանը՝ արվեստի տեսաբան, վիպասան և պոետ Կ.Մոկլերը: Իր «Բողերի հանճարը՝ պոետ, մտածող, գեղագետ» աշխատության մեջ Մոկլերը անդրադառնում է Պոյի ռոմանտիկացված կերպարին, ինչպիսին ստեղծել էր Բողերը, սակայն, ինչպես հետո պարզ կդառնա, նա կանգ չի առնում բողերյան փորձի վրա և ստեղծում է Պոյի սեփական կերպարը: Մինչ այդ Մոկլերը հեղինակել էր մեկ այլ գործ, որը կոչվում է «Ոգու արքայագներ», ուր նա հավաքել էր Պոյի, Ֆլոբերի, Մալարմեի, Վիլյե դը Լիլ-Ադանի ստեղծագործությունների և կենսագրությունների նկարագրությունները:

Մոկլերը, հետևելով Բողերի մոտեցմանը, Պոյին գնահատում է որպես մի մարդ, «որին կյանքը կարող է միայն վիրավորել», մի մարդ, ով «միաժամանակ հասել է մեծագույն ցավի և մեծագույն փառքի»:¹⁰ Մենք հիշում ենք, որ Պոյին նվիրված իր աշխատությունը Բողերը սկսում էր բառերով, թե աշխարհում կան պոետներ, որոնց մինչև կյանքի վերջ հետևում է դժբախտությունը: Մոկլերը այստեղ Պոյին ներկայացնում է որպես կյանքից կտրված, մեկուսացած պոետի, որը պատկանում է «մարդկանց հատուկ տիպին»: Այս ամենը մեզ կրկին հիշեցնում է Բողերի տողերը:

Էդգար Պոյի ստեղծագործությանը ուշադրություն են դարձրել նաև գրական և գրականագիտական տարբեր խմբավորումների և հոսանքների ներկայացուցիչներ՝ Ժ.Լական, Ժ.Դերիդա, Ժ.Բիկարդու, Ժ.Պուլե, Ժան-Պոլ Վերեր, Ռ.Բարս:

⁸ Richard, C. Poe Studies in Europe: France. — Poe Newsletter, January 1969. — Vol. II, No. 1, 2:20-3.

⁹ Richard, C. Poe Studies in Europe: France. — Poe Newsletter, January 1969. — Vol. II, No. 1, 2:20-3.

¹⁰ Maclair, C. Le génie d'Edgar Poe; la légende et la vérité, la méthode la pensée, l'influence en France. — Paris, A. Michel, 1925 — 94p. 5

Ժ.Լակյանի հոգեվերլուծական ուսումնասիրությունները գուտ գրականագիտական տեսանկյունից առնչվում էին առաջին հերթին Էդգար Պոյի «Հափշտակված նամակը» պատմվածքին: Այդ ուսումնասիրությունները դարձան Ժ.Լակյանի և Ժ.Դերիդայի գրական բանավեճերի կենտրոնը: Այդ գրական բանավեճերը այնքան լայն արձագանք գտան, որ որոշ ժամանակ անց դրանք ամփոփվեցին մեկ ժողովածուի մեջ, որը վերնագրվեց «Հափշտակված Պոն»:

Բոլոր այն դատողություններն ու գնահատականները, որոնք տեղ են գտել Բողերի տեսական ու քննադատական աշխատանքներում, կամ որոնք առաջին անգամ հնչել են Պոյի մասին Բողերի արտահայտություններում, հետագայում իրենց արձագանքն են գտնում ֆրանսիացի և եվրոպական մի շարք գրողների և քննադատների մոտ, հասնում մինչև նորագույն շրջանը:

Ե՛վ եվրոպական, և՛ ամերիկյան գրականագիտություն մեջ բոլորն անվերապահորեն ընդունում են այն փաստը, որ Պոյի անունը Ֆրանսիայում բոլոր առումներով առաջին հերթին կապված է Շարլ Բողերի հետ: Գրեթե բոլորը, ովքեր այս կամ այն չափով անդրադարձնում են Էդգար Պոյի ստեղծագործությանը, հենվում են բողերյան մոտեցումների, նրա հեղինակավոր գնահատականների վրա: Իսկ նրանք, ովքեր փորձում են հակադրվել Բողերի տեսական կամ քննադատական աշխատանքներում տեղ գտած այն հիմնադրույթներին, որոնք արժևորում ու մեկնում են Պոյի ստեղծագործությունը և նրա պոսիկան, ի վերջո՝ հիմնահարցերում դարձյալ կրկնում են բողերյան դրույթները, տարբերվող մոտեցումներ ցուցաբերելով միայն մասնավոր, ոչ էական հարցերում:

Ի մի բերելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ Բողերը կարողացավ ամփոփել և ամբողջացնել իրենից առաջ և իր օրոք Ֆրանսիայում կատարված ուսումնասիրությունները և թարգմանությունները, ի հայտ բերել դրանց դրական և բացասական կողմերը: Էականն այն էր, որ Բողերը կերտեց Պոյի պոսիկայի մանրակրկիտ ու խոր համապատկերը, նորովի բացահայտեց նրա գեղարվեստական աշխարհը, դրանում առկա առեղծվածայինի և միստիկականի արմատները և դրանց գործառույթները գրողի թե՛ արձակ և թե՛ չափածո գործերում: Դրանով իսկ նա «նոր կյանք» տվեց Պոյի գրական ժառանգությանը և մեծապես նպաստեց ողջ աշխարհում նրա հանճարի լայն ճանաչմանը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Ինչպես հաճախ է պատահել ամերիկյան գրականության պատմության մեջ, գրողն իր հայրենիքում ճանաչում չի գտնում, և այդ ճանաչումը գալիս է նրա մահից շատ տարիներ անց: Նույնը պատահեց Էդգար Պոյի դեպքում. Եվրոպայի և աշխարհի համար նրան «հայտնաբերեց» Բողերը, և նրանից հետո ֆրանսիացի սիմվոլիստներ՝ Մալարմեն և Վերլենը: Պոյի գրական ստեղծագործության այդչափ լայն արտացոլումը և մեկնաբանությունը Ֆրանսիայում դառնում են յուրատեսակ "երկխոսություն", որը հնարավորություն է տալիս խոսել Պոյի անձի ու ստեղծագործության ընկալման առանձնահատկությունների մասին ֆրանսիացի

գրողների և քննադատների կողմից: «Ֆրանսիական Պո» երևույթով են պայմանավորված Ֆրանսիայի հետագա գրական և մշակութային զարգացումները:

Մյուս կողմից գրողի ստեղծագործության՝ որպես գեղագիտական ֆենոմենի, բազմաթիվ մեկնաբանությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի օբյեկտիվ ընկալել այն:

Բողիների և ֆրանսիացի սիմվոլիստ գրողների կողմից արված՝ Պոյի ստեղծագործությունների թարգմանությունները և վերլուծությունները ստեղծեցին գրական-մշակութային մի ամբողջ շերտ և հիմք դրեցին Էդգար Պոյի «ֆրանսիական կերպարին»: Վերլուծությունների մեծ մասը հենվում է ֆրանսերեն թարգմանությունների վրա, որոնք էլ, փաստացի պատկերավոր նյութ են ծառայում այդ վերլուծությունների համար:

2. Թեև Պոյի ճանաչումը Ֆրանսիայում սկսվեց Բողիներից առաջ, վերջինիս դերը Պոյի լայն ճանաչման և Ֆրանսիայում նրա ստեղծագործության գնահատման գործում, ամենակարևորն էր և սկզբունքայինը: Այդ մասին է վկայում այն փաստը, որ գրականագետների և քննադատների ճնշող մեծամասնությունը, խոսելով Պոյի ֆրանսիական գրականության հետ ունեցած աղերսների մասին, միշտ կիրառում է «նախաբողիերյան» և «ետբողիերյան շրջան» բառակապակցությունը:

Անգամ 20-րդ դարավերջի ֆրանսիացի գրողները, անդրադառնալով Պոյին և խոսելով նրա ազդեցության մասին, առաջին հերթին հենվում են բողիերյան մոտեցումների վրա: Գրականագիտության մեջ անգամ ձևավորվել է «ֆրանսիական Պո» արտահայտությունը:

Եթե սկզբնական շրջանում Պոյի ստեղծագործությունները «հարմարեցվում էին» ֆրանսիական մենտալիտետին և ֆրանսիական իրոյթներին, ապա Բողիներից հետո այդ մոտեցումը պետք է արմատապես փոխվի. միայն Բողիերին կհաջողվի պահպանել Պոյի ստեղծագործության տառի և ոգու միասնությունը, ամբողջականությունը և նրա խոսքի հմայքը: Եթե սկզբնական շրջանում՝ մինչ Բողիերը, ինչպես տեսանք Պոն գլխավորապես ներկայացվում էր որպես «հետաքրքրաշարժ» և «տարօրինակ ու առեղծվածային» հեղինակ, ապա Բողիերը կբարձրացնի Պոյին այն պատվանդանի վրա, որին, հիրավի, արժանի է այդ հանճարեղ գրողը:

3. Առանձնակի ուշադրության և մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկվում գրողի անձի միֆականացման խնդիրը: Աշխատանքում մենք դիտարկում ենք Էդգար Պոյի կերպարի միֆականացումը ոչ այնքան անհատական անդրադարձների շրջանակներում (քննադատների, գրողների, կենսագիրների), որքան ֆրանսիական մշակույթի մեջ ընդհանրապես:

Մենք հիմնավորում ենք, որ Բողիերի ստեղծած՝ Էդգար Պոյի կերպարը ֆրանսիական գրականության և մշակույթի մեջ հիմք հանդիսացավ ամերիկացի գրողի անձի միֆականացման համար: Այն նմուշ-օրինակ ծառայեց Ֆրանսիայի հաջորդ սերունդների քննադատների և գրողների համար, որոնք կարող էին ինչպես համաձայնել, այնպես էլ հերքել Բողիերի մոտեցումը: Սակայն նրանք էլ իրենց հերթին, այսպես թե այնպես, նպաստում էին այդ կերպարի հետագա զարգացմանը:

Միֆականացման երկրորդ փուլը տեղի ունեցավ սիմվոլիզմի ծաղկման շրջանում, երբ այդ ուղղության տարբերակիչ առանձնահատկությունը դարձավ հասարակական ու անձնական կյանքի երևույթների համընդհանուր միֆականացումը: Բողերի կողմից Պոյի անձի միֆականացումը բերեց նրան, որ Ֆրանսիայում ստեղծվեց Պոյի կերպարի պաշտամունք: Այդ պաշտամունքի հարցը առավել արդիական է դառնում, երբ նկատի ենք ունենում Էդգար Պոյի ժամանակակից կարգավիճակը ֆրանսիական մշակույթում: Մի կողմից այդ անունը դառնում է ավանգարդային արվեստի խորհրդանիշ, ինչի մասին վկայում է այն մեծ հետաքրքրությունը Պոյի անձի և ստեղծագործության հանդեպ, որը ցուցաբերում են սյուրռեալիստ Անդրե Բրետոնը և պոստստրուկտուրալիստ Ռոլան Բարտը: Մյուս կողմից այն միահյուսվում է և «տարրալուծվում» զանգվածային մշակույթի մեջ:

4. Բողերն իր քննադատական գործերում գալիս է մեզ այն եզրահանգման, որ Պոյի համար պոեզիայի խնդիրը ոչ թե «բարձրագույն գեղեցկությունը» ցույց տալն է, այլ օգնելը ընթերցողին՝ ըմբռնելու այն: Բանաստեղծական երկի նպատակն է ընթերցողին նվիրել զմայլանքի պահեր, նպաստել հոգու վեհացմանը, որի միջոցով էլ նա կհասնի «բարձրագույն գեղեցկության» ըմբռնմանը:

«Ստեղծագործության փիլիսոփայությունը» հողվածում Պոն անդրադառնում է ստեղծագործական գործընթացի «մեխանիկայի» հարցերին: Հողվածում արծարծված մտքերը կարող ենք սահմանել որպես պոեմի ալգորիթմ, այսինքն՝ «գործողությունների» հստակ գրանցված հաջորդականություն, որի խստիվ պահպանումը տանում է դեպի նշված ստեղծագործության առաջացումը:

Պոյի բանաստեղծական տեսության անկյունաքարը «Էֆեկտն» է՝ տպավորությունը: Տպավորության միջոցով հոգու վեհացման հասնելը հնարավոր է, եթե երկն ունի սյուժեի, պատկերային համակարգի, տոնայնության միասնություն: Այս ամենն անհրաժեշտ է, որպեսզի ձեռք բերվի հուզական ազդեցության առավել խտացվածություն, տպավորության միասնություն, որը Պոյի գեղագիտության կարևորագույն հասկացություններից մեկն է: Բողերը ցույց է տալիս, որ ըստ Պոյի՝ պոեզիայի անմիջական նպատակը բավականությունն է, ոչ թե կենսական ճշմարտությունը: Այդ բավականությունը կրում է անորոշ բնույթ՝ ի տարբերություն արձակից ստացված բավականության, որը միանգամայն որոշակի բնույթ ունի:

Բողերը զարգացնում է այն միտքը, որ Պոյի պոեզիայում ներշնչման ձևերը ինքնանպատակ չեն. նրանք առաջացնում են երկի գեղարվեստական կառուցվածքի յուրատեսակ ենթատեքստ, որն ինքը Պոն անվանել է «միստիկական իմաստ»: Սակայն Բողերը գտնում է, որ Պոյի պոեզիայի «միստիկական իմաստը» ոչ այլ ինչ է, քան տրամաբանական և հուզական ենթատեքստ:

5. Լինելով սիմվոլիզմի նախակարապետներից մեկը՝ Բողերը այդպիսին է ուզում դարձնել նաև Էդգար Պոյին: Նա հմուտ կերպով փորձում է միահյուսել Պոյի միստիցիզմը խորհրդապաշտության հետ: Դա հաճախ նրան հաջողվում է նաև այն պատճառով, որ Պոյի տեքստերում, միշտ առկա է խորհրդապաշտական տարրը: Դա երբեմն վերափոխվում է մի առեղծվածային ենթատեքստի կամ մի անբացատրելի խորհրդի, քանի որ գաղտնիությունը, խորհրդավորությունը և անորոշությունը Պոյի պոետիկայի կարևոր բաղադրիչներին են:

Պոլի սիմվոլիկայի մեկնաբանման հարցում տարակարծիք լինելով շատ վերլուծաբաններ գտնում են, որ Պոն բարձրարվեստորեն էր օգտագործում սիմվոլները, ինչը նրա ժամանակակից բանաստեղծների համար անհասկանալի էր:

Խոսքը ոչ թե այն սիմվոլի մասին է, որի անորոշությունը թույլ է տալիս երկու-երեք մեկնաբանություն, այլ այն սիմվոլի, որում պարունակվում է երկու կամ երեք առանձին, իրարից հեռու, բանաստեղծական տեքստի տարբեր մակարդակներին համապատասխանող նշանակություններ:

Բողլերն ինքը իր ստեղծագործության մեջ սիմվոլների անկրկնելի արտահայտչականության միջոցով հասնում է խոսքի «մոգականության», որի հիմքում վառ երևակայությունն էր, որն օժտված էր սովորական դարձած երևույթին նախաստեղծ թարմություն հաղորդելու, արտասովորի մեջ անսպասելիորեն սովորականը տեսնելու ունակությամբ: Այն վայրկենական մղումով լուսավորում էր իրարից բաժան առարկաները, անսպասելիորեն մերկացնում նրանց արմատների մերձավորությունը: Վերջինը Բողլերի համար անժխտելի փաստ է, քանի որ բնությունը իր կառուցվածքով նրա մոտ ներկայանում է որպես «հրաշագեղ տաճար», որի գույները, բուրմունքները, հնչյունները՝ նույն լեզվի տարբեր ծածկագրերն են:

6. Բողլերը խորապես թափանցում է Պոլի գեղագիտական հայացքների համակարգը, ինչի շնորհիվ նա կարողանում է հերքել մի շարք քննադատների կարծիքը, թե Պոլի արձակը շատ ծանր է և դժվարընկալելի: Իր տեսական գործերում, ինչպես նաև սեփական թարգմանությունների միջոցով, Բողլերը կարողանում է ապացուցել, որ այդ «ծանրությունը» Պոլի պոետիկայի անհրաժեշտ բաղադրիչներից է, որը կոչված է ստիպել ընթերցողին խորասուզվել տեքստի «ներքին հյուսվածքի» մեջ, լարված պահել նրան ամբողջ ընթերցանության ընթացքում:

Այդ ամենը փորձում է փոխանցել իր թարգմանություններում նաև Բողլերը: Թեև այստեղ նա պահպանում է առանցքային մոտիվները, այդուհանդերձ, բանալի-բառերի կիրառման սկզբունքը նրա մոտ երբեմն փոփոխվում է: Սա կապված է ոչ այն բանի հետ, որ Բողլերը ճիշտ չի թարգմանում այս կամ այն բառն ու կապակցությունը. նա բավականին լավ է տիրապետում անգլերենին՝ ճշգրիտ համարժեքները գտնելու համար: Սակայն մենք չպետք է մոռանանք, որ իր բոլոր թարգմանություններում Բողլերը հենվում է սեփական աշխարհընկալման և սեփական գեղագիտական արժեհամակարգի վրա:

Բողլերը փորձում է ցույց տալ մեկնության և թարգմանության խորքային և կառուցվածքային հավասարագործությունը՝ բնութագրելով այդ երկուսի միասնությունը որպես փոխզիջում: Այստեղ առաջանում է խնդիր նույնական թարգմանության և բնագրի ճիշտ իմաստի վերարտադրման միջև: Նույնական թարգմանությունը, անշուշտ, շատ կարևոր է, սակայն յուրաքանչյուր թարգմանություն առաջին հերթին ենթադրում է թարգմանվող տեքստի գաղափարական բովանդակության ճշգրիտ վերարտադրություն:

7. Բոլոր այն դատողություններն ու գնահատականները, որոնք տեղ են գտել Բողլերի տեսական ու քննադատական աշխատանքներում, կամ որոնք առաջին

անգամ հնչել են Պոլի մասին Բողլերի արտահայտություններում, հետագայում իրենց արձագանքն են գտնում ֆրանսիացի և եվրոպական մի շարք գրողների և քննադատների մոտ, հասնում են մինչև նորագույն շրջանը:

Ե՛վ եվրոպական, և՛ ամերիկյան գրականագիտություն մեջ բոլորն անվերապահորեն ընդունում են այն փաստը, որ Պոլի մեծ համբավը Ֆրանսիայում բոլոր առումներով առաջին հերթին կապված է Շարլ Բողլերի անվան հետ: Գրեթե բոլորը, ովքեր այս կամ այն չափով անդրադառնում են Էդգար Պոլի ստեղծագործությանը, հենվում են բողլերյան մոտեցումների, նրա հեղինակավոր գնահատականների վրա: Անգամ նրանք, ովքեր հակադրվում են Բողլերի տեսական կամ քննադատական աշխատանքներում տեղ գտած այն հիմնադրույթներին, որոնք արժևորում ու մեկնում են Պոլի ստեղծագործությունը և նրա պոետիկան, ի վերջո՝ հիմնահարցերում դարձյալ կրկնում են բողլերյան դրույթները, տարբերվող մոտեցումներ ցուցաբերելով միայն մասնավոր, ոչ էական հարցերում:

Բողլերը կարողացավ ամփոփել և ի մի բերել իրենից առաջ և իր օրոք Ֆրանսիայում կատարված ուսումնասիրությունները և թարգմանությունները, քննադատորեն արժևորել դրանց դրական և բացասական կողմերը: Բայց ամենից կարևորն այն էր, որ Բողլերը կերտեց Պոլի պոետիկայի մանրակրկիտ ու խոր համապատկերը, նորովի բացահայտեց նրա գեղարվեստական աշխարհը, դրանում առկա առեղծվածայինի և միստիկականի գործառույթները: Դրանով իսկ նա «նոր կյանք» տվեց Պոլի գրական ժառանգությանը և մեծապես նպաստեց ողջ աշխարհում նրա հանճարի լայն ճանաչմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐԸ

1. Բողլերը՝ Էդգար Պոլի թարգմանիչ և քննադատ, «Համատեքստ-2013», Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 226-232:

2. Էդգար Պոն ֆրանսիական գրականության և քննադատության մեջ (Բողլերից առաջ և Բողլերից հետո), «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» (Գիտական հանդես), Եր., ԵՊՀ, 2014, թիվ 2(17), էջ 153-161:

3. Էդգար Պոլի պոետական կերպարի իմաստավորումը Շ. Բողլերի և Ս. Մալարմեի թարգմանություններում, «Հանդես» (Գիտամեթոդական հոդվածների ժողովածու), 2015, թիվ 16, Եր., Երևանի թատրոնի և կինոյի պետ. ինստիտուտ, «Վան Արյան» հրատ., էջ 209-214:

4. Է. Պոլի արձակի ֆրանսերեն թարգմանությունների առանձնահատկությունները, «Աստղիկ 26», Եր. ԵՊՀ, Լուսակն հրատ., 2016, էջ 65-78:

ЛОБЯН ЛИЛИТ ДЕРЕНИКОВНА

ТВОРЧЕСТВО ЭДГАРА АЛЛАНА ПО В ВОСПРИЯТИИ ШАРЛЯ БОДЛЕРА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата
филологических наук

по специальности : 10.01.07 – “Зарубежная литература”

Защита диссертации состоится 27 мая 2016 г., в 14:00 на заседании
специализированного совета 003 ВАК РА по “Армянской и зарубежной литературе”,
действующего при Институте литературы имени М. Абегяна НАН РА, по адресу: ул.
Г. Лусаворича 15, г. Ереван, 0002, Республика Армения.

РЕЗЮМЕ

Данная диссертационная работа посвящена критическому анализу восприятия Шарлем Бодлером творчества известного американского романтического писателя Эдгара Аллана По. Личность и творчество этого яркого и противоречивого писателя всегда притягивало к себе литературоведов. Этот большой интерес к писателю не потерял своей актуальности, о чём свидетельствуют многочисленные исследования, связанные с феноменом Эдгара По.

Творчество Э.По стало для французской литературы и культуры ключевой в концептуальном плане, что послужило основой для создания культа этого писателя. Наряду с Вашингтоном Ирвингом и Натанаэлем Готорном, По считается создателем жанра новеллы в американской литературе. Он теоретически подошёл к важности и значимости этого жанра, к его принципам. Актуальность нашего исследования основывается также на том, что на нынешнем этапе развития литературы и культуры образ и творчество Э.По приобрели исключительную важность как в области “интеллектуального искусства”, так и в области массовой культуры. Истоки этого в первую очередь следует искать в восприятии творчества По Шарлем Бодлером, который “открыл” этого писателя не только для Франции, но и для всей Европы, да и для самой Америки.

Вместе с этим исследование межкультурных связей сегодня является одним из самых важных направлений в литературоведении. Значимость нашего исследования объясняется ещё тем, что здесь сочетаются и сопоставляются литературно-критический анализ произведений Э.По с анализом особенностей их перевода. Этот одновременный анализ позволяет по-новому осмыслить те или иные проблемы “творческой механики” писателя.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

Во введении обосновывается выбор темы, ее актуальность и новизна, представляется степень изученности материала, а также цель и задачи исследования.

В первой главе – “Эдгар По во французских переводах и его влияние на французскую литературу” – анализируется весь пласт дободлеровского периода переводов произведений американского писателя, успехи и недоработки французских переводчиков, большинство которых сами являются писателями. Особо анализируются переводы Стефана Маларме, который является одним из основоположников французского символизма, что наложило свой отпечаток на “духе” этих переводов. Маларме заложил основу “тонкого” восприятия текстов Эдгара По. При переводе поэтических произведений американского писателя, Маларме не стремится строго сохранить их внешнюю форму, делая основной упор только на то, чтобы сконцентрировать внимание читателя на точное восприятие смысла этих строк.

После Стефана Маларме начинается новый подход к поэтическим текстам Эдгара По, как к произведениям, где основная глубина и сама суть скрыты в подтексте. Можно с уверенностью сказать, что если Бодлер “открыл” для Франции прозу По, то Маларме сделал почти то же самое с поэзией автора. Но, в отличие от Бодлера, Маларме, как и Верлен, как и другие писатели-символисты, не стремился прославить Эдгара По, “тиражировать” его творчество: эти произведения больше интересовали его с точки зрения символистского мировосприятия. Он часто искал “скрытый” символ даже там, где его быть не должно. Этим объясняется то обстоятельство, что слава По-поэта во Франции пришла намного позже, чем По-прозаика.

Во второй главе – “Шарль Бодлер – как переводчик Эдгара По” – анализируется техника перевода Бодлером прозаических произведений американского автора, в основе которой – опора на теоретические и эстетические принципы, изложенные Эдгаром По в своих аналитических работах, которые в свою очередь “расшифровал” и по-своему переосмыслил Бодлер. Наряду с этим, Бодлер при переводе опирается и на свои теоретические принципы, при этом находя общие точки соприкосновения между своим художественным мировосприятием и таковым Эдгара По.

В этой же главе производится сопоставительный и сравнительный анализ между французскими переводами одних и тех же произведений, сделанных в разное время разными авторами до Бодлера и переводами самого Бодлера. Исследовательская практика и многоспектральный анализ творчества Э.По подтверждает правильность суждения теоретика литературы Л.Лемонье о том, что исследование истории содания “французского По” следует начинать с переводов. Переводы, сделанные до Бодлера отличаются своим поверхностным характером, своей чрезмерной вольностью, а порой – просто “переложением” произведений По на французский лад. При этом очень часто происходила смысловая трансформация, или искажение авторских идей.

Бодлер был по сути первым и лучшим переводчиком прозы Эдгара По, которому удалось не только максимально сохранить дух и букву оригинала, но и во всей полноте передать гамму оттенков той богатой палитры, который вложил в свои произведения По. Будучи большим новатором в поэзии, автор “Цветов зла” порой пытается “сблизить” свой поэтический мир с поэтическим миром Эдгара По. Но при этом Бодлер вынужден признать разницу между поэтическим мировосприятием По и

своим. Анализ критических работ Бодлера о своеобразии и неповторимости эстетического идеала Эдгара По, нашедших своё отражение в его поэзии, и не поддающихся переводу не только в силу своей особой ритмики и мелодики, но и из-за своей “мистической загадочности” и многозначности, служит для французского автора обоснованием того, почему он берётся за перевод поэзии По. Знаменательно то, что свои теоретические воззрения Бодлер доказывает на практике, детально анализируя свой единственный перевод из поэтического наследия американского автора – стихотворение “Ворон”.

Третья глава – “Эдгар По в критике Бодлера и во французской литературной критике” – посвящена анализу критических работ Шарля Бодлера – в контексте французской литературной критики этого периода, обращённой к творческому наследию По.

Анализ этих работ выявляет те исходные позиции и те принципы, основываясь на которых Бодлер в новом свете выставляет поэтику Эдгара По, его художественную систему и шкалу ценностей. При этом художественное мировоззрение По как правило анализируется через призму его жизненных перипетий.

По ходу своих аналитических суждений, Бодлер старается представить Эдгара По в трёх ипостасях: как поэта, как прозаика и как критика. В последней ипостаси он выступает у Бодлера одновременно и в качестве философа.

Известные литераторы и теоретики этого периода – Русло, Кабо, Форклац – высоко оценивая критические и литературно-эстетические работы Бодлера, иногда даже ставят их на один уровень с его художественным творчеством. Правда, встречаются в критике и суждения, противоположные бодлеровским. Однако общий обзор литературной критики отмечаемого периода выявляет определённые закономерности в осмыслении Бодлером творческого наследия Эдгара По. Одна из главных подобных закономерностей заключается в том, что Бодлер настолько прочно и основательно утвердил образ “французского По”, что он стал мифом, легендой, которую никому не по силам развеять.

Критики и историки литературы могут соглашаться и не соглашаться с оценками и подходами Бодлера, но единственное чего они не могут, это – “обойти” Бодлера, когда речь заходит о критическом переосмыслении творчества Эдгара По и его влияния на развитие литературы во Франции.

В заключении обобщены итоги проведённого исследования.

Lilit Derenik Lobyan

EDGAR ALLAN POES' WORK IN CHARLES BAUDELAIRES' PERCEPTION

Dissertation for obtaining the scientific degree of candidate of Philological Sciences,
in the speciality of "Foreign Literature"(Speciality Code 10.01.07)

The defence of the dissertation is scheduled for 27 May, 2016, at 14:00, at the meeting of
the Specialized Council of Armenian and Foreign Literature 003 at the Institute of
Literature after M. Abeghyan, NAS, RA.

Address: 15 GrigorLusavorich str. 0002, Yerevan, Republic of Armenia.

SUMMARY

This thesis is devoted to the critical analysis of Edgar Allan Poe's work in Ch.Baudelaires' perception. The personality and creativity of this vibrant and controversial writer has always attracted literary critics. This great interest has not lost its relevance as evidenced by numerous studies related to the phenomenon of Edgar Allan Poe.

The creativity of Poe became the key for the French literature and culture in the conceptual plan, that formed the basis for creation the cult of this writer. Along with Washington Irwin and Nataniel Gorton, Poe is considered the creator of the genre in American literature .He theoretically approached the importance and significance of this novel genre,to its principles. The relevance of our research is also based on the fact that the current stage of the development of literature and culture, the image and work of Poe gained exceptional importance in the field of intellectual art and in popular culture as well. The origin of this is to be searched in Edgar Poe's works in Baudelaires' perception, who discovered this writer not only for France ,but for the whole Europe and America.

Together with it the research of intercultural communications is at present one of the most important directions in literary criticism. The importance of the research is explained by the fact that literary –critical analysis of Poe's works are combined and compared here. This simultaneous analysis allows on new comprehension of those or other problems of "creative mechanics" of the writer.

The thesis consists of introduction, three chapters, and bibliography.

The choice of the theme, its topicality and novelty are proved in the **Introduction**, the degree of the scrutiny level of the material is represented ,as well as the aim and the tasks of the research.

In the first chapter –"Edgar Allain Poe in French translations and his influence on French literature "- are analyzed all layers of translations of the American writer in pre-Baudelaire period ,successes and faults of French translators ,majority of them are writers. It is especially analyzed translations by Malarmé, one of the founders of French symbolism, that has imposed print on the "spirit "of these translations. He has laid the foundation for "gentle" perception of Poe's texts.

After Stéphane Mallarmé a new approach starts to Edgar Poe's poetic texts, as to works where the basic depth and implied sense are hidden in the implication. With confidence may be said that if Baudelaire "opened" Poe's prose for France, Mallarmé made almost the same thing with the poetry of the author. But unlike Baudelaire, Mallarmé, as well as Valéry and other writers-symbolists did not aspire to glorify Poe, to "duplicate" his work; these works of Poe are more interesting from the point of view of symbolic perception. He often looked for a "latent" symbol even there where it should not be. It explains the circumstance that the glory of Poe-poet in France had come much later than Poe-prose writer.

In the second chapter -Charles Baudelaire as the translator of Edgar Poe- is analyzed Baudelaire's technique of translations of prosaic works of the American author, a pillar on the theoretical and aesthetic principles, written by Poe in his analytical works which in its turn Baudelaire "deciphered". Alongside with it while translating, Baudelaire based on his theoretical principles, thus finding general points in common between his art attitudes and those of Poe.

In the same chapter a comparative analysis is done between the French translations of the same work made by different authors before Baudelaire and translations made by Baudelaire. Research practice and multispectral analysis of Poe's works proves the assertion of the literary theorist L. Lemonnye that the research of the history of creation "French Poe" should be begun with translations. The translations done before Baudelaire, differ by the superficial character, the excessive liberty, and is at times, simply by "transposition" Poe's works on French manner. Thus, very often semantic transformation or statement of the author's took place.

As a matter of fact, Baudelaire was the first and the best translator of Edgar Poe. He managed to keep not only the spirit and letter of the original, but also pass the scale of shades of that rich palette in its entirety that Poe enclosed in his works. Being great innovator in poetry, the author of at times tries to pull together the poetic world with the poetic world of Edgar Poe. But thus Baudelaire was compelled to recognize the difference between Poe's poetic attitude and that of his.

The analysis of Baudelaire's critical works about the originality of Poe's aesthetic ideal, embodied in its poetry and not objected to translation not only by virtue of special rhythm, but also because of the "mystical mysteriousness" which is the background why he undertakes the translations of Edgar Poe's works. It is significant that Baudelaire proves his theoretical views in practice, analyzing in detail his unique translation from a poetic heritage of the American author-the poem "Raven".

In the third chapter - "Edgar Poe in Baudelaire's critics and in French literary critics" -is devoted to the analysis of Baudelaire's critical works in the context of French literary critics of this period, turned to Poe's creative heritage.

The analysis of these works reveals those initial positions and those principles based on which Baudelaire exposes Edgar Poe's poetics its art system and the scale of values in a new light. Thus Edgar Poe's art outlook, as a rule, is analyzed through the prism of vital barriers.

On the course of analytical decisions Baudelaire tries to present Edgar Poe in three hypostases- as a poet, as a writer, and as a critic. In the latter hypostases he acts as a philosopher at the same time.

Famous writers and theorists of this period- Rouslo, Cabo, Forklats- highly appreciating Baudelaire's critical and literary -aesthetic works, sometimes even put him on the same level with his creative work. However, the general review of criticism of the marked period reveals certain consistent patterns in Baudelaire's assertion of Poes' creative heritage. One of such essential consistent patterns is how Baudelaire strongly and thoroughly approved the image that it became a myth, a legend which nobody is able to dispel.

Literary critics and historians can agree with Baudelaire's marks and approaches but the only thing they cannot, is to "bypass" Baudelaire when the point is the critical reconsideration of Poe's works and his influence on the development of the literature in France.

In the conclusion the results of the carried out research are summarized.

A handwritten signature in black ink, likely of Charles Baudelaire, written in a cursive style. The signature is positioned on the right side of the page.